



«ՆՈՐԱԴԵՆ» ՆՏ ԱԿ

Լիցենզիա --- №11343

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0038, Հալաբյան փող. շ. 11, բն. 36

Գործունեության իրականացման հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0051, Ն.Զարյան փող. շ. 22, հ. 12

Հեռ. +(37493)504009

ՊԱՏՎԵՐ՝ ----- №. SPAP II C-3.1.1.d

Պատվիրատու1՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

**Պատվիրատու2՝ ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյա
ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն ՊՀ**

**ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համալիր սոցիալական
ծառայությունների տարածքային կենտրոնի
վերանորոգման**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնք, Գյումրիի խճուղի հ. 42 վարչական շենք



ԳԻՐՔ - 0

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2016թ.



«ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ

Լիցենզիա --- №11343

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0038, Հալաբյան փող. շ. 11, բն. 36

Գործունեության իրականացման հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0051, Ն.Զարյան փող. շ. 22, հ. 12

Հեռ. +(37493)504009

ՊԱՏՎԵՐ՝ ----- №. SPAP II C-3.1.1.d

Պատվիրատու 1՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Պատվիրատու 2՝ ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյա
ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն ՊՀ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համալիր սոցիալական
ծառայությունների տարածքային կենտրոնի
վերանորոգման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնք, Գյումրիի խճուղի հ. 42 վարչական շենք

ԳԻՐՔ - 0

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ստորագրություն

ՆԳԾ՝ Յ. ԲԱԲԱՅԱՆ
ստորագրություն

ԵՐԵՎԱՆ – 2016թ.

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

(ստորագրությունը)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության աշխատակազմի ղեկավար

Ա. Գրիգորյան

<<_____>> _____ 2016թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

No. Անվանումը

1. Տիտղոսաթերթ
2. Բովանդակություն
3. Փորձաքննության եզրակացություն
4. Նախագծման թույլտվություն (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք)
5. Պատվիրատուի կողմից տրված նախագծային առաջադրանք
6. Տեխնիկական եզրակացություն
7. Սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական
8. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ
9. Գազամատակարարման տեխնիկական պայմաններ
10. Ջրամատակարարման տեխնիկական պայմաններ
11. Աղբահանության տեխնիկական պայմաններ
12. «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի լիցենզիաները
13. «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի լիցենզիաները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԷՔՍՊԵՐՏ ՄԵԿ»



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ
ОТВЕТСТВЕННОСТЬЮ

«ЭКСПЕРТ МЕК»

Երևան, Արցախի 6^ր-52

Հեռ. (+374 93) 38 35 60
Тел.

Ереван, Арцах 6^б-52

№ 5-041

ԼԻՑԵՆԶԻԱ 15455

« 15 » 11 2016 թ.

Երևան

« ՆՈՐԱՇԵՆ » ՆՏ ԱԿ

Կից ուղարկվում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի
Գյումրիի խճուղի հ. 42 հասցեում Ախուրյանի համալիր սոցիալական
ծառայությունների տարածքային կենտրոնի վերանորոգման նախագծի
մասին փորձաքննության եզրակացությունը:

Առդիր՝ եզրակացությունը 5 էջից:

ՏՆՕՐԵՆ

Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

« ԷՔՍՊԵՐՏ ՄԵԿ » ՍՊԸ

ԼԻՑԵՆԶԻԱ 15455

« ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ »

ՏՆՕՐԵՆ

Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

« 15 »

2016թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № Ե-041

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գյումրիի խճուղի հ.42 հասցեում
Ախուրյանի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի
վերանորոգման նախագծի մասին

Կառուցապատող՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախագծող՝ « ՆՈՐԱՇԵՆ » ՆՏ ԱԿ

Նախագծման հիմքը՝ Ախուրյան համայնքի ղեկավարի կողմից տրված 14.06.2016թ.
հ.01 նախագծման թույլտվությունը

Ճարտարապետական մաս

Նախագծով նախատեսվում է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գյումրիի խճուղի հ. 42 հասցեում գտնվող վարչական շենքում Ախուրյանի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի (ՀՄՏԿ) վերանորոգման, վերակառուցման ու տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում: Կենտրոնի ենթակա տարածքները գտնվում են շենքի նկուղային, առաջին և երկրորդ հարկերի որոշակի հատվածներում: Հողամասին կից գտնվում են փողոցներ, հարևան տարածքներ: Տրանսպորտային պայմաններն ապահովվում են Գյումրիի խճուղով:

Նախագիծը ներառում է ՀՄՏԿ գրասենյակային տարածքի նորոգման շինարարական աշխատանքների, շենքի դիմային ճակատի կողմից թեքուղու կառուցման, հարկերի վերահատակագծման, ինժեներական, հրդեհային, անվտանգության համակարգերի վերանորոգման և մոնտաժման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև տարածքի բարեկարգումը, կանաչապատումը:

Վերակառուցման նախագծի համաձայն հարկերում ապամոնտաժվում են շենքի դռներն ու պատուհանները, բոլոր միջնորմները, փայտե վիտրաժները:

Նկուղային հարկի տարածքի պատերը ներսի կողմից մաքրվում են սվաղից, երեսապատվում են մետաղական ցանցի վրայով ցեմենտավազի սվաղով: Հարկում մեկ դռան բացվածք ընդլայնվում է՝ համապատասխան ամրացումներով:

Հատակագծային լուծումներին համապատասխան իրականացվում են նոր միջնորմներ:

Շենքի գլխավոր մուտքի ձախակողմյան հատվածում, ճակատի երկարությամբ իրականացվում է թեքուղի, իսկ շենքի առաջին հարկում նաև սանհանգույց՝ հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի սպասարկման համար:

Նկուղային հարկում նախատեսված են նախամուտք, արխիվ:

Առաջին հարկում նախատեսված են նախասրահ, ընդունարան, խորհրդատվության սենյակ, ռեսուրս կենտրոն, հետազոտման սենյակ, սանհանգույց, օժանդակ սենյակներ:

Երկրորդ հարկում նախատեսված են նախասրահ, աշխատասենյակներ, սերվեր, խոհանոց, դահլիճ, սանհանգույց:

Բոլոր պատուհանները և ներքին դռները պլաստմասայե պրոֆիլներով են, առաջին հարկի նախասրահի վիտրաժը՝ ներկած ալյումինե պրոֆիլով:

Աշխատասենյակների հատակները լամինատից են, սանհանգույցների հատակները՝ կերամիկական սալիկներից, մնացած տարածքներինը՝ կերամոզրանիտից:

Սենյակների պատերը պատվում են լվացվող ներկածածկով: Սանհանգույցների պատերը երեսապատվում են կերամիկական սալիկներով: Սենյակներում նախատեսված են «Արմսթրոնգ» տիպի կախովի առաստաղներ:

Հարկերում հատակագծային լուծումները, սենյակների կազմը, քանակը և դասավորությունը մշակված են պատվիրատուի առաջադրանքի համապատասխան: Էսքիզային նախագիծը համաձայնեցված է պատվիրատուի հետ:

Կոնստրուկտորական մաս

Նախագծին կցված է վերը նշված հասցեում գտնվող վարչական շենքի շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ «Հաբշին նախագիծ» ՍՊԸ կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, համաձայն որի շենքը երեք հարկանի է, կիսանկուղային հարկով, երկայնական և լայնական կրող պատերով: Կառուցվել է 1980-ական թվականներին: Հիմքերը ժապավենային են, բուտաբետոնից: Ցոկոլը բազալտե շարվածքից է, պատերը՝ սրբատաշ տուֆ քարից՝ 50 սմ հաստությամբ: Լայնական պատերի հեռավորությունը 9,0 մ-ից անցնում են: Ծածկերը՝ հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերով: Տանիքը քառաթեք է, կազմակերպված ջրահեռացմամբ:

Ակնադիտական հետազոտումից պարզվել է, որ շենքի կրող և պատող կոնստրուկցիաներում ճաքեր, նստվածքային երևույթներ չեն նկատվում: Նրանք գտնվում են բավարար տեխնիկական վիճակում: Նկուղային հարկում պատերը խոնավացած են: Շենքի վնասվածության աստիճանը գնահատված է I-II կարգի, որի դեպքում հնարավոր է շենքի կամ կառուցվածքի համար նվազագույն մակարդակի վերակառուցում և ընթացիկ նորոգում: Բերված են անհրաժեշտ առաջարկներ և հանձնարարականներ:

Նկուղային հարկում ՀՄՏԿ – ին տրամադրված տարածքի պատերը ներսի կողմից մաքրվում են սվաղից, պատվում մետաղական ցանցով և երեսապատվում ց/ավազի սվաղով:

Շենքի դիմային ճակատից իրականացվող թեքուղու համար նախագծված են առանձին տիպի բետոնե հիմքեր, որոնք ունեն 500×500 մմ հատակագծային չափեր: Հիմքերի բետոնի դասն ընդունված է B15: Հիմքերի տակ տեղադրվում է խամքաբաբետոն: Հիմքերի մեջ տեղադրվում են $100 \times 100 \times 3$ մակնիշի պողպատե կանգնակներ, որոնք միմյանց միանում են պողպատե շվեկերների հեծաններով: Ստացված մետաղական կարկասի վրա տեղադրվում են բազրիքները: Թեքուղու հատակը նախագծված է տեռասային պոլիմերային տախտակներից:

Նոր իրականացվող միջնորմներում տեղադրվող դռների համար նախագծված միաձույլ ե/բ բարավորների լայնական հատվածքի չափերը կազմում են 200×200 մմ: Բարավորներն ամրանավորվում են $\emptyset 8 A500c$ դասի երկայնական ձողերով և $\emptyset 6 Acl$ դասի լայնական ամրաններով՝ 150 մմ քայլով: Բետոնի դասն ընդունված է B15:

Նկուղային հարկում լայնացվող դռան բացվածքը գոտևորվում է մետաղական շրջակապով: Շրջակապն իրականացվում է պողպատե անկյունակներից և թերթավոր պողպատից:

Ինժեներական մաս

Վերանորոգվող տարածքի ջրամատակարարման և կոյուղու ցանցերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի համաձայն: Սառը ջրի մատակարարումն իրականացվում է գոյություն ունեցող ջրագծից: Նախատեսված է առանձին ջրաչափական հանգույց: Տաք ջրի պատրաստումն իրականացվում է $+3,25$ միշում նախատեսվող երկկոնտուրանի կաթսայի միջոցով: Զրամատակարարման ցանցի համար ընտրված են $15 - 25$ մմ տրամագծի պլաստմասայե խողովակներ, որոնք հատակներում տեղադրվում են բետոնի միջով, իսկ պատերի վրա՝ սվաղի միջով, ջերմամեկուսացումով:

Կենցաղային կեղտաջրերը սան.սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով, որը միացվում է կոյուղու բակային ցանցի գործող դիտահորին: Կոյուղագիծը նախատեսված է $50 - 100$ մմ տրամագծի պլաստմասայե խողովակներից, համապատասխան ձևավոր մասերով:

Տարածքի էլեկտրասնուցումն իրականացվում է հարակից տարածքում տեղակայված ենթակայանի 10 կՎ ուղղությունից սնվող ցածր լարման վահանից, որի համար նախագծված է պղնձե մալուխային գիծ, որը միանում է շենքի ներսում տեղադրված գլխավոր բաշխիչ վահանակին: Էլեկտրաէներգիայի ընդունումը և բաշխումը կատարվում են հարկային բաշխիչ վահաններից, որոնք տեղադրվում են էլ.վահանային սենյակներում: Շենքում տեղադրվում են 48 ավտոմատ անջատիչների համար նախատեսված բաշխիչ վահանակներ: Վարդակային ցանցը նախատեսված է երեք միաջիղ հաղորդալարերից, լուսավորության ցանցը՝ կրկնակի մեկուսացմամբ եռաջիղ հաղորդալարերից: Վարդակները տեղադրվում են հատակից 30 սմ բարձրության վրա, անջատիչները՝ 85 սմ բարձրության վրա: Հաղորդալարերի անցումը նախատեսված է մոնտաժային խողովակների և տուփերի միջով:

Շենքի համար նախագծված է հողանցման համակարգ: Հողանցումն իրականացվում է արտաքին և ներքին հողանցման կոնտուրներով: Արտաքին կոնտուրում նախատեսված են 40×4 մմ կտրվածքի շերտապողպատից հորիզոնական հողանցիչներ և 5 մ երկարությամբ, $63 \times 63 \times 5$ մմ կտրվածքի պողպատե անկյունակներից ուղղահայաց հողանցիչներ: Ներքին կոնտուրը նախատեսված է մալուխային հորանների միջով, պատից ամրացնելով,

իրականացվում է 40 × 4 մմ կտրվածքի շերտապողպատից: Որպես բնական հողանցիչ օգտագործվում է հողի մեջ տեղադրված ջրագծերի մետաղական խողովակաշարը:

Տարածքում նախագծված են ջեռուցման երկու անհատական համակարգեր՝ հորիզոնական, ստորին մատակարարմամբ, ջրի փակուղային շարժմամբ: Որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում են գազային երկկոնտուրանի տուրբո կաթսաները: Մատակարար և հետադարձ խողովակներն անցկացվում են հատակի շրիշակների վրայով: Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե սեկցիոն մարտկոցներ՝ 500 մմ բարձրությամբ: Ջեռուցման ցանցի համար ընտրված են պոլիպրոպիլենե խողովակներ:

Օդափոխության համար նախատեսված են բնական և արհեստական արտածման համակարգեր, ներածումը կատարվում է բնական եղանակով: Սանհանգույցների օդափոխությունն իրականացվում է առանցքային և կանալային օդափոխիչների միջոցով: Սերվերի սենյակում նախատեսված է Սպլիտ սիստեմի կոնդիցիոների տեղադրում: Օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից:

Շենքի ջրատաքացուցիչ կաթսաների գազատարի միացումն իրականացվում է գոյություն ունեցող 76 մմ տրամագծի վերգետնյա ցածր ճնշման գազատարից: Սահմանազատման կետում տեղադրվում է գազի հաշվիչ հանգույց: Գազատարի մոնտաժն իրականացվում է պողպատե ջրագազատար խողովակներով:

Նախագծով նախատեսված են հակահրդեհային անվտանգության, պահպանության ազդանշանային համակարգերի իրականացում:

Հակահրդեհային և պահպանության համակարգերի հսկումն ու ղեկավարումն իրականացվում են 20 ազդանշանային շղթայով հսկման - ղեկավարման սարքի միջոցով, որը տեղակայվում է առաջին հարկում, տնտեսվարի սենյակում: Հրդեհի դեպքում համակարգն ապահովում է տարհանման ազդարարում լուսաձայնային ազդարարիչների միջոցով: Տարածքները հսկվում են ծխային և ջերմային ազդասարքերով:

Պահպանվող տարածքները հսկվում են պատերին և առաստաղներին տեղակայվող ակուստիկ ազդասարքերով և պատուհանների ու դռների փեղկերին ամրացվող բացման մագնիսակոնտակտային տվիչներով:

Նախագծով նախատեսված է նաև համակարգչային, հեռախոսային և հեռուստատեսային ցանցերի իրականացում: Համակարգչային ցանցի լարանցումը նախատեսված է մալուխներով՝ սերվերային սենյակ - միջանցք, հարկից - հարկ, միջանցք - աշխատասենյակներ ճանապարհով, միջհարկային անցումներով և պատերի մեջ տեղակայված կանալների միջով: Համակարգիչների և հեռախոսների ցանցային վարդակները տեղադրվում են կանալների մեջ: Պատին տեղակայված հեռուստացույցների, պրոյեկտորների և տեսահսկման սարքերի համար տեղադրվում են արտաքին տեղակայման վարդակներ:

Փորձաքննության է ներկայացված շենքի վերակառուցման շին. աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը՝ 109.891,60 հազ. դրամ նախահաշվային արժեքով:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվը կազմված է օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն, 2016թ. գործող գներով:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. նորմերի գնահաշվարկով, կիրառելով ռուբլուց դրամ անցման հետևյալ գործակիցները՝ աշխատավարձի մասով 1956,82;

մեքենաների շահագործման մասով 2624,02:

Շին. նյութերի ծախսը վերցված է 1984թ. շին. նորմերից, նյութերի արժեքները՝ ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակված 2016 թ. հ. 7 ինֆորմացիոն տեղեկագրից, կիրառելով հետևյալ տոկոսադրույքները՝

տրանսպորտային ծախսեր 8,8%;

պահեստավորման ծախսեր 2,0%;

այլ նյութեր 5,0%:

Նախահաշվում ուղղակի ծախսերի վրա հաշվարկված են 13.3 % վերադիր ծախսեր և 11.0% շահույթ:

Տեղային նախահաշիվների հիման վրա կազմված է ամփոփ նախահաշիվ՝ համապատասխան լիմիտավորված տոկոսադրույքներով:

Բոլոր ծախսերի վրա հաշվարկված է ավելացված արժեքի հարկ 20 %:

Տեղային նախահաշիվներում որոշ նյութերի և սարքավորումների արժեքներ վերցված են շուկայից կամ մատակարարող և աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների գնացուցակներից: Նշված նյութերի արժեքների համար շինարարության ընթացքում պետք է ներկայացվեն համապատասխան հաշիվ - ապրանքագներ և գները հիմնավորող փաստաթղթեր:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը, «ԷՔՄՊԵՐՏ ՄԵԿ» ՍՊԸ նշում է.

- Նախագիծը կատարված է եզրակացության հանձնարարականների համաձայն;
- Նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան;
- Շենքի վերակառուցման շինարարական աշխատանքների տեղային և հավաք նախահաշիվները կազմված են ՀՀ կառավարության 14. 07. 2011թ. 879-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն: Նախահաշվային արժեքը կազմում է 110054,28 հազ. դրամ, այդ թվում ԱԱՀ՝ 18.221,05 հազ. դրամ;
- Նախահաշվներում հաշվարկված շին. նյութերի ծավալները համապատասխանում են նախագծերում բերված տվյալներին;
- Փորձաքննության ընթացքում նախագծա - նախահաշվային փաստաթղթերում հայտնաբերված թերություններն ու անճշտությունները վերացված են աշխատանքային կարգով:

Եզրակացություն. Նախագիծը երաշխավորվում է համաձայնեցման և հաստատման:

Փորձագետ




Ս. Մկրտչյան

Փորձագետ




Է. Մելքումյան

Փորձագետ



Է. Թադևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՅԵՆՔԻԱ

15455

(համարային համար)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԵՐԻ ՄԵԿՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՒԹՅՆՈՒԹՅԱՆ
ԴԱՅՍԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՏՎՈՐԹՅՈՒՆ ԶՊԱՆԱՋՎՈՂ ՄԱՏԱՔԱՆԵՐԻ

(գործունեության տարածք)

Տրված է

«30 ՄԱՅԻՍԻ 2012թ.» «ԷՔՍՊԵՐՏ ՄԵԿ» ՍՊԸ-Ք. ԵՐԵՎԱՆ, ԱՐՑԱՄԻ 6 Բ/Շ ԲՆ.52

((իջեմզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումը ու գտնվելու վայրը,
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունը ու բնակության վայրը))

Գործողության ժամկետը՝

ԱՆժԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ



(ստորագրություն)

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

(անուն, ազգանուն)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՈՎԿԻ ՄԱՐԶ, ՍՆՈՒՌԷՄՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂՈՒՄՔ)

N 01

« 14 » 06 2016թ.

Օրբելս:

<< Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի տնտեսական ծախսերի կենտրոնի վերանորոգման նախագծային փաստաթղթերի մշակում

(օրբելսի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործարանական նշանակության փոփոխություն)

(միջինը բարձր ժնդկային օրբելս) III (կատեգորիա)

(հակիրճ բնորոշումը, հզորությունը, ժնդկայինության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

<< Շիրակի մարզի Ախուրյանի համայնք, Գյումրիի խմուխի հ. 42 վարչական շենք

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող

<< աշխատանքի և տնտեսական հարցերի նախարարություն

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջարկողի տրամադրման հիմքը

Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 14062016-08-0004, 14.06.2016թ., նախագծի էսքիզային առաջարկ

(կառուցապատման նպատակով << օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է խաղը կառուցապատման գոտի

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործարանական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 889,3 ք.մ.

(հողամասի սահմանները կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը

Անբարելավ տարածք, վերանորոգման եւ վերակառուցման ենթակա շենքի հատվածներ, որոնք գտնվում է Ախուրյանի ՀՈՍԿ-ի գրասենյակ

(օբյեկտի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարելավումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Գյումրիի խմուխ

(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

գործող գազատար, ջրամատակարարման, կոյուղու և էլեկտրական ցանցեր

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Գյումրիի խմուխ, հարևան տարածքներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային

հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Սահմանափակումներ չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀՆԱԶՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել << Ախուրյանի համայնքի տնտեսական ծախսերի կենտրոնի վարչական տարածքի վերանորոգման և շենքի հարակից տարածքի բարելավման նախագիծը հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 14.06.2016թ. N 14062016-08-0004 վկայականով ամրագրված տարածքի սահմաններում

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվադրական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց քաղաքային դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) Օրբելսի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օրբելսներից) (մետր)

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

9.4. կառուցապատման խտության գործակիցը

(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տուկոսը (կառուցապատվող

(անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

9.6. կանաչապատման տուկոսը

(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.7. այլ պահանջներ

- Ախուրյանի ՀՈՍԿ-ի գրասենյակի վարչական տարածքների վերանորոգումը եւ վերակառուցումը իրականացնել «Հաբշին նախագիծ» ՍՊ ընկերության կողմից 26.08.2015թ. տրված տեխնիկական եզրակացության հանձնարարականների հիման վրա:
- Նախագծով հնարավոր է նախատեսել վարչական շենքի ներքին վերահատակագծում, արտաքին ճակատների արդիականացում, շրջակա տարածքի բարելավում:
- Նախագծով կազմակերպել ավտոտրանսպորտային միջոցների ելումուտ:

- Կարգական շենքի գլխավոր շքամուտքի մոտ նախատեսել թեքահարթակ անվտանգակներով, հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի մուտքի շենքի տարածք ապահովելու համար

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների թանգան կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը
Լյուրյանի ՀՕՏԿ-ի գրասենյակի վարչական տարածքում նախատեսել գոյություն ունեցող միջնորմների, դռների, պատուհանների, հատակի շերտերի ապամոնտաժում եւ նորոգի տեղադրում

11. Ստորգետնյա, կիսանկյուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության Մալովխատար կոյուղու տեղադիրքը (համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով տեղադիրքը սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12.6. արժահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում (ռելիեֆի կազմակերպման, ջրաբաշխման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում
Նախատեսել շենքին հարակից տարածքի բարեկարգում և կանաչապատում (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, զանկապատում, գովազդ և այլն)

15. Ծինարարական նյութեր
Երկաթբետոն, մետաղ, ապակի, պրաստաշ և կոպտատաշ թաղ, բարձրորակ սվաղ, երեսապատման, ջրանեկուսացման և ջրամեկուսացման համար օգտագործվող բարձրորակ նյութեր (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ
Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ
Նախատեսել հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժելու համար անհրաժեշտ պայմաններ

19. Երջակա միջավայրի պահպանում
Ապահովել շրջակա միջավայրի պահպանման միջոցառումներ (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

20. Ծինարարության կազմակերպում
Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, թաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը
Երկու տարի (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ
ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի հ.596-Ն որոշման հավելված հ.2. պառզ փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում
(իրավաստ մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ
(Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների առաջում
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 58-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ
Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների հաստատման մասին» հ.273-Ն հրամանով հաստատված որոշումներին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

(ստորագրությունը, ամսաթիվ, ազգանունը)

Ա. ԻԳԻԹՅԱՆ



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



(ստորագրությունը)

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության աշխատակազմի ղեկավար

Ա. Գրիգորյան

17 հոկտեմբեր 2016թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ախուրյանի Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի

վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների

1	Շինարարության վայրը, հասցեն	համայնք Ախուրյան, Գյումրիի խճուղի 42 վարչական շենք
2	Տարածքի հատկացման հիմքը	սեպականության վկայականի համար՝ 14062016-08-0004
3	Նախագծման հիմքը	SPAP II C-3.1.1.d
4	Շինության մակերես	889.3 քմ
5	Շինության կից հատկացված (բարեկարգման ենթակա) հողատարածքի մակերեսը	
6	ՀԱՅՏԿ-ում գործող տարածքային կազմակերպությունների թիվը	3
7	Աշխատակիցների ընդհանուր թիվը	19 /միջին կենտրոն/
8	Հետազոտությունների փուլ	
8.1	Բնակլիմայական և ինժեներաերկրաբանական պայմաններ	
8.2	Երկրաբանական եզրակացություն(ըստ անհրաժեշտության)	
8.3	Շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն	
9	Նախագծային փուլ	
9.1	Էսքիզային նախագիծի մշակում	
9.1.1	Նախագծի լրացուցիչ տարբերակների մշակման ցուցում	
9.1.2	Էսքիզային նախագծի համաձայնեցում պատվիրատուի հետ	
9.1.3	Ճարտարապետահատակագծային առաջադրանքի ստացում	
9.2	Ճարտարապետական մաս	
9.2.1	Տանիք	
9.2.2	Հատակներ	
9.2.2.1	Ընդունարան, ընդհանուր տեղաշարժման տարածքներ, աստիճանավանդակներ, տնտեսական սենյակ, սերվեր, արխիվ, խոհանոց, սան հանգույցներ, ԲՄՀՎՎ զննման սենյակ	չսահող սալիկ (60x60), աստիճանավանդակները - վերանորոգում նույն նյութով կամ համապատասխան սալիկներով
9.2.2.2	Աշխատասենյակներ, պեդերի սենյակներ, խորհրդարարության սենյակ, դահլիճ, ռեսուրս կենտրոն, ԲՄՀՎՎ բժիշկների սենյակ	c 5 կարգի լամինատե մանրահատակ
9.2.3	Ջրամատակարարման համակարգ	զոդման եղանակով մոնտաժված պոլիպրոպիլեն խողովակներով ցանց՝ համալրված ջրօգտագործման հաշվարկային քանակներին համապատասխան ավտոմատ սնուցմամբ, ինչպես նաև ճնշումային պոմպով և կուտակային բակով
9.2.4	Կոյուղու համակարգ	մոնտաժված պոլիպրոպիլեն խողովակներով ցանց
9.2.5	Ջեռուցման համակարգ	ներպատային կամ ներհատակային, զոդման եղանակով մոնտաժված պոլիպրոպիլեն խողովակներով ցանց
9.2.6	Օդափոխություն համակարգ	
9.2.6.1	ընդունարան	
9.2.6.2	Աշխատասենյակներ, պեդերի սենյակներ, խորհրդարարության սենյակ, դահլիճ, ռեսուրս կենտրոն, ԲՄՀՎՎ բժիշկների սենյակ	

9.2.6.3	Սերվեր, արխիվ, խոհանոց, փոխնիկական սենյակ, փնտրական սենյակ, սանհանգույցներ	
9.2.6.4	Ընդհանուր փողաշարժման փարածքներ, ասփրանավանդակներ	չի նախատեսվում
9.2.7	Օդորակման համակարգ	
9.2.7.1	ընդունարան	
9.2.7.2	Աշխատասենյակներ, պեղերի սենյակներ, խորհրդարանի սենյակ, դահլիճ, ռեսուրս կենտրոն, ԲՍՓՀ բժիշկների սենյակ, խոհանոց, փոխնիկական սենյակ, փնտրական սենյակ	
9.2.7.3	Սերվեր, արխիվ	սերվերային սենյակում՝ անհատական տեղային օդորակիչ (պատային սալիտ համակարգ)
9.2.7.4	Ընդհանուր փողաշարժման փարածքներ, ասփրանավանդակներ	չի նախատեսվում
9.2.8	Էլեկտրամատակարարման, համակարգչային, հեռախոսային և փեսահսկման համակարգերի լարանցման եղանակներ և ընդհանուր դրույթներ	
9.2.8.1	<p>Կենտրոնի համակարգչային ցանցի լարանցումները կատարել հետևյալ սկզբունքով. սերվերային սենյակ - միջանցք - աշխատասենյակ - պատ - սեղան (կետ):</p> <p>Սերվերային սենյակից համակարգչային ցանցի լարերի (1000 Mbit/second արագություն ապահովող UTP-5e մալուխները) խումբը միջպատային և միջհարկային պաշտպանիչ խողովակների միջոցով դուրս բերել համապատասխան հարկի միջանցք, այնուհետև միջհարկային ծածկի կամ կախովի առաստաղի գոյության դեպքում այդ առաստաղի տակով լարանցման համար նախատեսված կենտրոնական ընդհանուր կանալի միջոցով՝ լարանցման հորիզոնական սակառով (շրիշակ, кабел канал) 3 միջնապատի հնարավորությամբ, ձևավոր մասերով (գործարանային արտադրության անկյուններով, անցումներով, եռաբաշխիչներով, ամրակապման դետալներով) լարերի խումբը տեղակայել մինչև յուրաքանչյուր սենյակ: Միջպատային խողովակի միջոցով յուրաքանչյուր սենյակի համար նախատեսված համակարգչային ցանցի լարերի խումբը և համակարգիչների համար նախատեսված էլեկտրական հոսանքի լարերի խումբը ներս տանել տվյալ սենյակ և նույն պատի անկյունով ուղղահայաց լարանցման սակառով (շրիշակ, кабел канал) 3 միջնապատով, ձևավոր մասերով (գործարանային արտադրության անկյուններով, անցումներով, եռաբաշխիչներով, ամրակապման դետալներով) լարախումբը (համակարգչային ցանցի լարերը՝ UTP 5e, և էլեկտրական հոսանքի լարերը (յուրաքանչյուր վարդակին առանձին)՝ 220Վ/2.5մմ²) իջեցնել հատակի մակարդակին, որտեղից արդեն հորիզոնական լարանցման կանալներով լարերը բաժանել համապատասխան օգտագործողներին՝ մեկ օգտագործողին երկու, կամ երեք վարդակի հաշվարկով, ըստ նախագծի: Հորիզոնական կանալները տեղակայումը սկսել ուղղահայաց լարանցման կանալի և հատակի հատման կետից, այնուհետև առանց ընդհատումների շարունակել սենյակի պատերի պարագծով: Այն սենյակներում, որտեղ նախատեսված են խմբային սեղաններ, լարանցումները կատարել առաստաղին ամրացող մետաղյա մալուխովներով, ձևավոր մասերով կախովի առաստաղի վերևում մոնտաժված, իսկ առաստաղ սեղան լարանցումն ապահովել այլուրից կամ պլաստմասե զսպանակածն տուփախողովակներով: Համակարգչային ցանցի վարդակները պետք է տեղադրվեն լարանցման կանալների մեջ: Համակարգչային ցանցը պետք է հավաստագրվի մասնագիտացված կազմակերպության կողմից և ներկայացվի պատվիրատուին / հավաստագիր և համակարգչային ցանցի գծագրեր/: Համակարգչային ցանցի արագությունը պետք է լինի 1000Մբ/վրկ, անցկացված 5e կատեգորիայի մալուխով:</p>	

